ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

սեպտեմբերի 2021 թվականի № Ա

ք. Երևան

«ԱՔՍԱՏԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվություններն ու այլ տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

2) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի №2 հավելվածի №2-2 ձևով սահմանված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ն է,

3) «ԱՔՍԱՏԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի 1-ին կիսամսյակի արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողովում մուտքագրվել է 2021 թվականի օգոստոսի 13-ին,

4) Որոշման պահանջի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2021 թվականի օգոստոսի 13-ից Հանձնաժողովն Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2021 թվականի օգոստոսի 12-ի №ԳԲ/34.3-Մ2-7/2757-2021 գրությամբ,

5) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի օգոստոսի 17-ի գրությամբ հայտնել է, որ Որոշմամբ հաստատված Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի հուլիսի 26-ին psrcinfo@psrc.am էլեկտրոնային փոստի հասցեով, սակայն տեխնիկական խնդիրների պատճառով էլեկտրոնային ստորագրությունը Հանձնաժողովում չի կարդացվել, ապա հեռախոսազանգով այդ մասին տեղեկացվելուց հետո Տեղեկատվությունը օգոստոսի 13-ին կրկին ուղարկվել է,

6) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետն ըստ էության չի խախտել, քանի որ 2021 թվականի հուլիսի 26-ին (2021 թվականի հուլիսի 25-ը եղել է ոչ աշխատանքային օր) ներկայացված Տեղեկատվությունը տեխնիկական պատճառով Հանձնաժողովում չի մուտքագրվել՝ համաձայն գործող իրավակարգավորման պահանջի, այդուհանդերձ, բովանդակային առումով ընկերությունն ապահովել է սահմանված ժամկետում պարտավորության կատարումը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Տեղեկատվության ներկայացման՝ Կարգով սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2021 թվականի օգոստոսի 13-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
սեպտեմբերի 2021թ.